ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆ-ԱՐՑԱԽ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԵՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

2018 թվականը հոբելյանական է: Հայ ժողովուրդը նշում է Հայաստանի առաջին Հանրապետության հարյուրամյակը: Աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում ծնված մեր առաջին հանրապետությունը անկախ պետականության վերականգնման հայոց իղձերի մարմնավորումն էր: Դարակազմիկ այդ իրադարձությունը ազգային գիտական միտքը մեր օրերում փորձում է իմաստավորել ներքին ու արտաքին քաղաքական այն գործընթացների համատեքստում, որոնք ուղեկցել են ինքնիշխան պետականության վերականգնման մեր պայքարին կամ որոնցում թափ է առել այն: Ավելի հանգամանալից վերլուծության կարիք ունեն նաև XX դարասկզբի մեր ազատագրական պայքարի արցախյան ճակատում ծավալված իրադարձությունները:

Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակի և Ղարաբաղյան շարժման 30-ամյակի հոբելյանական միջոցառումները ունեն մեծ խորհուրդ: Բայց այնպես չպիտի լինի, որ մենք, այդ միջոցառումներով տարված, մոռացության մատնենք հայոց մերօրյա գլխավոր հիմնախնդրի՝ արցախյան հիմնախնդրի հետ կապված և միջազգային հանրությանը պատշաճ ձևով ներկայացնելու տեսակետից արտակարգ կարևոր այն փաստը, որ նույն 2018-ին լրանում է նաև ղարաբաղ-ադրբեջանական հակամարտության 100-րդ տարին:

Այո՛, կոնֆլիկտը 100 տարեկան է:

Դա տարբեր աշխարհաքաղաքական միջավայրերում, իրավական ու սոցիալական տարբեր կաղապարներում, հիբրիդային պատերազմի ամենատարբեր զենքերով մեկ ամբողջ դար անընդմեջ շարունակվող կոնֆլիկտ է: Ուղիղ 100 տարի է, ինչ նախ *կովկասյան թաթար* և ապա *ադրբեջանցի* անվան տակ քողարկված Արևելյան Անդրկովկասի թուրքը փորձում է ծնկի բերել Արցախը, զավթել այն, ցեղասպանել հայոց այդ հատվածը: Ուղիղ 100 տարի է, ինչ Արցախը ինքնապաշտպանական մարտերում ետ է մղում ցեղասպան զավթիչի այդ գրոհները[1]: Ղա-

[1] Հարյուրամյա դիմաբախության վավերագրերը գրեթե սպառիչ ներկայացված են Յու. Գ. Բարսեղովի խմբագրությամբ Մոսկվայում 2008 թ. հրատարակված «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Документы и комментарии փաստաթղթերի ժողովածուում:

բաբաղա-ադրբեջանական հակամարտության՝ որպես հարյուրամյա դիմաբախության պատմական, քաղաքական, քարոզչական, հոգեբանական տեսանկյունների գիտական վերլուծության ու իմաստավորման կարևորությունը նախ և առաջ մե՛նք պետք է գիտակցենք և համապատասխան մեսիջներով այն հասցնենք միջազգային հանրությանը: Մեր և մեր բարեկամների ջանքերով տեղեկատվական հոսքերում ակտիվորեն պետք է շրջանառվի այն փաստը, որ միջազգային հանրությունը գործ ունի 100-ամյա կոնֆլիկտի հետ: Մենք դա ընդգծում ենք այն պատճառով, որ Բաքվի մեր ընդդիմախոսների մատուցմամբ՝ միջազգային քաղաքական շրջանակներում տիրապետող է այն պատկերացումը, թե կոնֆլիկտը ծագել ու բորբոքվել է ԽՍՀՄ լուծարման ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հետևանքով: Այդ պատկերացումը կարելի է դուրս մղել և պետք է դուրս մղվի տեղեկատվական ու քաղաքական շրջանառությունից անհերքելի այն փաստերի ճնշմամբ, որ մենք ունենք մեր տրամադրության տակ: Ստորև անդրադարձ է կատարվում հակամարտության պատմական, քաղաքական ու իրավական այն գործընթացներին, որոնք հիմնախնդիրը բերել են մերօրյա հանգրվանին: Հարցը ծավալուն է, և մեր դիտարկումները, բնական է, չեն հավակնում լինել սպառիչ ու համապարփակ: Մենք կանգ կառնենք քննարկվող թեմայի բանալի այն գաղափարների, հասկացությունների ու հարցադրումների վրա, որոնք պայմանավորում են թեմայի խորքային իմացության համարժեք մեթոդաբանությունն ու օբյեկտիվությունը և հետևաբար միջազգային քաղաքական դաշտում դրանց նպատակամետ կիրառությունը: Մենք ելնում ենք այն կանխադրույթից, որ արդյունավետ քաղաքականություն իրագործելու համար պարտադիր է իմանալ կոնֆլիկտի մասին ճշմարտությունը բոլոր մանրամասնություններով, ամբողջ ծավալով ու խորությամբ:

Նախ՝ պատմական բնույթի մեկնարկային այն դրույթի մասին, որ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության սկիզբը հենց 1918 թվականն է[2]: Քաղաքական տեսակետից այդ դրույթի տեղեկատվական նշանակությունը կասկածից դուրս է: Բանն այն է, որ որպես դրա հիմնավորում մատնացույց է արվում պատմական անհերքելի այն փաստը, որ 1918-ից առաջ տարածաշրջանում այդ անվամբ հակամար-

[2] 2001-2006 թվականներին մերձմոսկովյան Սնիգերի բնակավայրում ժողովրդական դիվանագիտության ձևաչափում տեղի ունեցած Բաքու-Ստեփանակերտ-Երևան եռակողմ Դարտմուտյան խորհրդաժողովում «*Ղարաբաղ-Ադրբեջան* կոնֆլիկտի սկիզբ» հասկացության շուրջ քննարկումների ժամանակ Ադրբեջանական Հանրապետության նախկին արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովը փորձում էր հիմնավորել, որ հակամարտության սկիզբ պետք է դիտվի 1992 թ. մայիսի 8-9-ը, երբ, իր խոսքերով, «ղարաբաղցիները գրավել են Շուշին»: Հայ փորձագետները հիմնավորապես հերքեցին այդ կեղծ դրույթը՝ հղում կատարելով պատմագիտության լայնորեն հայտնի փաստերին՝ 1918-ին ծավալված ռազմական գործողություններին և Ազգերի լիգայում հարցի արծարծումներին: Այդ քննարկումները ցույց տվեցին, թե քաղաքական տեսակետից սկզբունքային ինչ նշանակություն ունի «հակամարտության սկիզբ» հասկացությունը:

տություն չկար և չէր կարող լինել, քանի որ մինչ այդ Արևելյան Անդրկովկասում ո՛չ Ադրբեջան անունով պետական գոյացություն, ո՛չ աշխարհագրական տարածք, ո՛չ էլ էթնիկական խումբ է եղել:

Տարածաշրջանի՝ XX դարի պատմության մեծ պաստառի վրա առանձնանում են կոնֆլիկտի ծավալման երեք փուլեր՝ նախախորհրդային, խորհրդային ու հետխորհրդային, որոնք բնականաբար պետք է հիմք ընդունել հակամարտության փոխակերպումների, արդյունքների ու միտումների տեսական իմաստավորման համար:

Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ դիմաբախության նախախորհրդային փուլի իրադարձային բովանդակությունը և իրավաքաղաքական հիմնական արդյունքները

Եթե փորձենք հակիրճ բնութագրել հակամարտության 1918-1920 թթ. փուլը իրավաքաղաքական բովանդակության ու արդյունքների տեսակետից, ապա պետք է արձանագրվի հետևյալը:

Առաջին: Ռուսական կայսրության անկումից հետո ողջ Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կառույցի շուրջ հայերի ու կովկասյան թաթարների միջև 1917-1918 թթ. ծավալված էթնոքաղաքական կոնֆլիկտը[3] աշխարհագրորեն նեղացվել և ղարաբաղյան հարցին է հանգեցվել դեպի Անդրկովկաս թուրքական ներխուժման, հայկական կոտորածների[4], Բաքվում օրինական իշխանությունը ջարդելու և այն մուսավաթների ձեռքը հանձնելու հետևանքով: Այդպես է Արևելյան Անդրկովկասի ազգային պետական կառուցվածքի շուրջ հայերի ու կովկասյան թաթարների միջև ծագած կոնֆլիկտը աշխարհագրորեն նեղացվել և վերածվել ղարաբաղյան հակամարտության և այդ անվամբ հայտնվել միջազգային քաղաքական օրակարգում:

Երկրորդ: 1918 թ. սեպտեմբերին թուրքական ռազմական միջամտությամբ քաղաքական իրողություն դարձած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը Թուրքիայի կողմից իր սահմաններից դուրս բնիկ ժողովրդի ցեղասպանության ճանապարհով թուրքական նոր պետություն հիմնելու առաջին փորձն է, որը նախորդել է միջազգային հանրության կողմից մինչ օրս ճանաչում չստացած Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ստեղծմանը:

---

[3] 1905-1907 թթ. հայ-թաթարական բախումները, որ հրահրված էին ցարական հատուկ ծառայությունների կողմից, առավելապես էթնիկական բախումներ էին: 1917-1918 թթ. հայերի ու կովկասյան թաթարների միջև ծագած կոնֆլիկտները շոշափում էին Ռուսական կայսրությունից դուրս մնացած Արևելյան Անդրկովկասի քաղաքական կացության, երկրամասի ազգային-պետական կառուցվածքի հարցը: Հայտնի է, որ Թիֆլիսում 1918 թ. մայիսի 27-ին Բաքու մայրաքաղաքով հռչակված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը չէր կարողանում մեկնել Բաքու, քանի որ այնտեղ խորհրդային իշխանություն էր հռչակված, որի ազգային հենարանը հայերն էին: Այս պարագայում 1917-1918 թթ. հայ-թաթարական վեճը սոսկ էթնիկական կոնֆլիկտի բնույթ չուներ: Այն տիպիկ էթնոքաղաքական կոնֆլիկտ էր:

[4] Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», փաստաթղթերի ժողովածու, Եր., 2003:

Երրորդ: 1918-1920 թթ. *Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան* կոնֆլիկտը միջազգայնացվել է երրորդ կողմերի ռազմաքաղաքական անմիջական միջամտությամբ: Այդ շրջանում *Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան* կոնֆլիկտին հօգուտ Բաքվի անմիջական միջամտություն ցուցաբերեցին ոչ միայն թուրքերը: Նրանց փոխարինելու եկած, Բաքվում նավթային շահեր հետապնդող անգլիացիները ամեն կերպ փորձում էին ճնշել արցախցիներին և ստիպել նրանց ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Այդ փորձերը ի վերջո ձախողվեցին: Ո՛չ թուրքերին, ո՛չ անգլիացիներին չհաջողվեց կոտրել արցախցիների կամքը, հայրենի երկրամասը զավթիչներից պաշտպանելու նրանց վճռականությունը: Թուրքական այդ ծրագիրը խափանվեց միայն շնորհիվ այն զինված դիմադրության, որին Նուրի փաշայի զորքը հանդիպեց Արցախում: 1918 թ. հոկտեմբերի 18-ին Մամնայի տակ թուրքական զորագնդի ջարդը դրա ապացույցն է:

Չորրորդ: 1918-1920 թթ. պաշտպանական մարտերում արցախահայությունը, ի դեմս երկրամասի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների և նրանց ձևավորած ժողովրդական կառավարության ու Ազգային խորհրդի, ձեռք բերեց ինքնակազմակերպման ու ինքնակառավարման իրավաքաղաքական անգնահատելի փորձ: Լեռնային Ղարաբաղը հայտարարելով Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս՝ արցախահայության ձևավորած լեգիտիմ իշխանությունները կազմակերպեցին հայրենի երկրամասի ինքնապաշտպանությունը[5], արժանապատվորեն այն ներկայացրին Ադրբեջանի ու անգլիացիների հետ բանակցություններում[6]: Այդ տարիներին Լեռնային Ղարաբաղը օժտված է եղել դե ֆակտո պետության հիմնական ատրիբուտներով:

Հինգերորդ: Հակամարտության նշված առաջին փուլում միջազգայնացվել է նաև ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման գործընթացը: Հարցը հայտնվել է Ազգերի լիգայի օրակարգում, որը Արցախը ճանաչել է վիճելի տարածք Լիգայի կողմից դե ֆակտո ճանաչում ստացած Հայաստանի առաջին Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության միջև:

Վեցերորդ: 1919-1920 թթ. թուրքական կանոնավոր բանակի ու մուսավաթականների հետ բախումներում արցախահայությունը հերոսական գոյամարտերում հայրենի երկրամասը աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում հասցրեց «նոր ափեր», իրավաքաղաքական նոր միջավայր՝ պայմանավորված տարածաշրջանը Խորհրդային Ռուսաստանի ազդեցության ոլորտում հայտնվելով և անդրկովկասյան

---

[5] 1917-1923 թթ. իրադարձությունների վերաբերյալ արխիվային փաստական նյութերին կարելի է ծանոթանալ Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը. 1917-2000» (Եր., 2003) գրքի Ա մասում:

[6] Մանրամասն տե՛ս «Нагорный Карабах в 1918-1923 гг.» (под ред. В. А. Микаеляна), Ер., 1992:

հանրապետություններում խորհրդային կարգերի հաստատմամբ[7]:

Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ դիմաբախության խորհրդային շրջանի իրադարձային բովանդակությունը և իրավաքաղաքական հիմնական արդյունքները

Ղարաբաղա-ադրբեջանական կոնֆլիկտի երկրորդ փուլը ընդգրկում է 1920-1991 թթ., որը սկիզբ առավ խորհրդայնացված Ռուսաստանի վերադարձով Անդրկովկաս և ավարտվեց 1991 թ. ԽՍՀՄ լուծարումով: Այդ շրջափուլում Արցախն իր պայքարը շարունակել է դժվարագույն պայմաններում: Հայկական երկրամասը Բաքվի կողմից Խորհրդային Հայաստանի մաս ճանաչվելուց (1920 թ. նոյեմբերի 30) և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքը ճանաչող հռչակագրի ընդունումից (1920 թ. դեկտեմբերի 2) հետո Թուրքիայի հետ քաղաքական գործարքների մեջ մտած բոլշևիկյան Մոսկվան բռնությամբ, ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի՝ իրականում չքննարկված ու չքվեարկված որոշմամբ Լեռնային Ղարաբաղը ներառեց Խորհրդային Ադրբեջանի սահմաններում՝ մարզային լայն ինքնավարություն ունենալու իրավունքով:

Իրավաքաղաքական բովանդակության ու արդյունքների տեսակետից *Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան* հակամարտության երկրորդ փուլը համառոտակի կարող է բնութագրվել.

ա) ՌԿ(բ)Կ Կովբյուրոն իր որոշումն «ընդունել է» 1921 թ. հուլիսին, երբ դեռ ԽՍՀՄ-ը չէր ստեղծվել և Խորհրդային Ռուսաստանը Հայաստանի Հանրապետությունը դիտում էր որպես ինքնիշխան պետություն: Երրորդ երկրի կուսակցական մարմինը այլ պետությունների տարածքային հարցեր լուծելու իրավասություն չուներ, և բնականաբար, նրա որոշումը միջազգային իրավունքի տեսակետից առոչինչ էր ընդունման պահից: Սակայն Կովբյուրոյի պլենումի նիստին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի՝ դե ֆակտո անկախ խորհրդային հանրապետությունների ղեկավարների, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի մասնակցությունը, չնայած այդ կուսակցական մարմնի անիրավազորության հանգամանքին, ինքնին հաստատում է, որ հակամարտությունն ըստ էության դարձել էր միջազգային քննարկման առարկա:

բ) Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի կապակցությամբ Բաքվի ու Երևանի ընդունած հռչակագրերը և հստակ գիտակցելով, որ ըմբոստ

---

[7] 1920 թ. ապրիլի 24-29-ին Լեռնային Ղարաբաղի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 9-րդ համագումարը, որը հայրենի երկրամասը հռչակեց Հայաստանի առաջին Հանրապետության անկապտելի մաս: Գուցե այն կարող էր դիվանագիտական իմաստով ավելի նուրբ քայլ անել՝ խորհրդային իշխանություն հռչակելով Հայաստանում: Դա կնշանակեր, որ երկրամասը հռչակվում է Հայաստանի մաս, բայց չհակադրվելով երկրամաս վերադարձած բոլշևիկյան Ռուսաստանին: Այդ դեպքում գուցե և քաղաքական ինչ-որ փաստարկներ կհայտնվեին Արցախի թղթապանակում այն բանից հետո, երբ ընդամենը մի քանի օր անց 11-րդ Կարմիր բանակը մտավ Լեռնային Ղարաբաղ և այնտեղ հռչակեց խորհրդային իշխանություն: Սակայն եղել է այն, ինչ եղել է, և ինչպես ասում են՝ պատմությունը եթեներ չի սիրում:

արցախցին անպայման կդիմի անհնազանդության ու պայքարի հնարավոր բոլոր ձևերին, ի հայտ դարձնելով ազգային արդարության բոլշևիկյան կարգախոսների կեղծությունը, Մոսկվան ստիպված պարտադրեց - Բաքվին, որ նա, համաձայն Կովբյուրոյի որոշման, հռչակի հայկական ինքնավարության հիմնադրման մասին դեկրետ: 1918-1921 թթ. Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված քաղաքական իրադարձությունները հաստատում են, որ 1923 թ. **լայն իրավունքներով մարզային ինքնավարության կարգավիճակը Լեռնային Ղարաբաղին մատուցած նվեր չի եղել, այլ տրվել է որպես քաղաքական փոխհատուցում Խորհրդային Հայաստանից նրան բռնությամբ օտարելու և Ադր. ԽՍՀ սահմանները մտցնելու դիմաց:** Այդ բռնակցումը հիմնավորվում էր այն փաստարկներով, որ Խորհրդային Ադրբեջանը ոչ ազգային, ինտերնացիոնալ հանրապետությունն է, այլ կերպ՝ այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների ընդհանուր պետություն է:

գ) Եթե 1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղը օսմանյան ու կովկասյան թուրքերի հետ զինված բախումներում չպաշտպաներ իր դե ֆակտո անկախությունը, եթե նրա լեգիտիմ իշխանությունները՝ արցախահայության լիազոր ներկայացուցիչների համագումարները, երկրամասը բազմիցս չհռչակեին Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս, եթե նա խաբվեր պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու ազգային արդարության բոլշևիկյան կարգախոսներից և Ադր. ԽՍՀ կազմում լինելու լռելյայն համաձայնություն տար, ապա նա չէր ստանա ինքնավար մարզի կարգավիճակ, չէր դառնա ԽՍՀՄ ազգային պետական կառույցի սուբյեկտ, ներկայացված չէր լինի նրա բարձրագույն օրենսդիր մարմնում: Այդ ամենին Արցախը հասել է համառ պայքարի շնորհիվ:

դ) Տարածաշրջանի պատմության և *դարաբաղա-ադրբեջանական հարյուրամյա հակամարտության* համայնապատկերում առանձնացվող պատմաքաղաքական մյուս կարևոր փաստը կապված է ադրբեջանական ազգ ստեղծելու ստալինյան նախագծի հետ: Ստալինը որոշեց որպես ոչ ազգային, ինտերնացիոնալ հանրապետություն հիմնված Խորհրդային Ադրբեջանի բնիկ իսլամադավան ժողովուրդների և կովկասյան թաթարների միախառնման ու ձուլման ճանապարհով ստանալ ինքնությամբ թուրքականից ու պարսկականից տարբեր էթնիկական մի նոր հանրություն, որը չպիտի ունենար ո՛չ թուրքական, ո՛չ էլ պարսկական կողմնորոշում: Նախագիծը ծանր հետևանքներ ունեցավ թալիշների, լեզգիների, թաթերի և Խորհրդային Ադրբեջանի մյուս իսլամադավան ժողովուրդների համար, որոնք այդ երկրի իրական տերերն էին: Այն իրականում վերածվեց Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների ցեղասպանության, նրանց բռնի թուրքացման ծրագրի: Նրանց մեծ մասը, խուսափելով ուծացումից, անցավ ազգային ընդհատակ, ուր գտնվում է մինչ օրս: XX դարի 30-ականներին գործողության

մեջ դրված այդ նախագիծը ծանր կացության մեջ դրեց նաև Արևելյան Անդրկովկասի հայությանը՝ ադրբեջանահայությանը՝ ինտերնացիոնալ այդ հանրապետության հիմնադիր ժողովրդին: Հանրապետության ներքին կյանքը իր ձեռքը վերցրած երեկվա կովկասյան թաթարը ադրբեջանական ազգ ձևավորելու նախագծի քողի տակ տասնամյակներ շարունակ ստացավ բոլոր բնիկ ժողովուրդների, այդ թվում և հայության նկատմամբ բռնություններ իրագործելու Մոսկվայի լռելյայն թույլտվությունը: Հենց այդ տարիներին հայաթափվեց Նախիջևանը: Ադրբեջանական ազգ ստեղծելու ստալինյան նախագիծը, այսպիսով, ԽՍՀՄ տարիներին դարձավ Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) ցեղասպանության իրագործման քաղաքական հիմքը և հանցագործության քողարկման վարագույրը:

Ե) *Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան* հարաբերությունների կոնֆլիկտային բնույթը անփոփոխ է մնացել Խորհրդային Միության շուրջ յոթ տասնամյակների ընթացքում: Խորհրդային կայսրությունում կոմունիստական մենատիրության դաժան պայմաններում արցախահայությունը չէր դադարեցնում պայքարը պատմական արդարության, սեփական բախտը տնօրինելու իր ոտնահարված իրավունքի վերականգման համար: Մարզը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու պահանջով տարբեր տարիներ տեղի ունեցած զանգվածային ստորագրահավաքները հաստատումն են այն իրողության, որ արցախահայությունը չի հաշտվել հայրենի երկրամասը Ադր. ԽՍՀ-ին հանձնելու հետ: Նա այդ բռնությանը լռելյայն համաձայնություն չի տվել, ուստի 1988-ին նրա պայքարն ընդունեց բացահայտ ձև և համաժողովրդական բնույթ, որ հայոց և ԽՍՀՄ պատմության մեջ մտավ *Ղարաբաղյան շարժում* անունով:

զ) Ղարաբաղյան ազատագրական շարժումը ԽՍՀՄ ղեկավարությանը ստիպեց դիմել իրավաքաղաքական աննախադեպ քայլերի: Դրանց շարքում հատկապես պետք է առանձնացվեն հատուկ կառավարման համակարգի ներդրումը ինքնավար մարզում, որի ընթացքում մարզը փաստորեն դուրս բերվեց Խորհրդային Ադրբեջանի ենթակայությունից, և 1990 թ. ապրիլին «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» ԽՍՀՄ օրենքի ընդունումը: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առումով օրենքը արցախահայության ինքնորոշման ճանաչված իրավունքը վերահաստատող ակտ էր ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր հանրապետությունների կողմից: 1991 թ. սեպտեմբերի 2-ին, Ադրբեջանական Հանրապետության անկախության հռչակումից անմիջապես հետո, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և հարակից հայկական Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների խորհուրդների համատեղ նստաշրջանը որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմք նշել է նաև ԽՍՀՄ այդ օրենքը: ԼՂՀ հռչակման լեգիտի-

մության հիմքերի շարքում Հռչակագիրը նշել է նաև Ադրբեջանական Հանրապետության կողմից Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարումը: Նույն 1991 թ. հոկտեմբերի 18-ին «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտում այդ հրաժարման բացորոշ վերահաստատումը Լեռնային Ղարաբաղին տրամադրել է իրավական հզոր փաստարկ առ այն, որ ինքը իր անկախությունը հռչակում է այդ հանրապետությանը իրավաբանորեն չպատկանող տարածքում:

Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ դիմաբախության հետխորհրդային շրջանի իրադարձային բովանդակությունը և իրավաքաղաքական հիմնական արդյունքները

Անկախության հռչակումով Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտությունը մտավ պատմական նոր փուլ, որը շարունակվում է մինչ օրս: Հակամարտության հետխորհրդային շրջանի զարգացումներն ու գլխավոր իրադարձությունները անհնար է համարժեք ձևով հասկանալ ԽՍՀՄ տրոհման գործընթացներից դուրս և այն դերակատարության անտեսումով, որ վերագրվել է Լեռնային Ղարաբաղին այդ շրջանում: Լայնորեն շրջանառվում է քաղաքական վարկած այն մասին, որ Արևմուտքը վաղուց է մշակել ԽՍՀՄ-ը ըստ միութենական հանրապետությունների (իրենց ներքին սահմաններով հանդերձ) տրոհման նախագիծը և այն գործողության մեջ է դրել, երբ երկրի ղեկին հայտնվել է հարմար «գործընկեր»՝ Միխայիլ Գորբաչովը: Զարմանալի կլիներ, եթե այդպիսի նախագիծ չլիներ: Աշխարհաքաղաքական այդ մեծ գործողության հնարավոր տարբերակների մեջ դա եղել է ամենաէժանն ու ամենահեշտ իրագործելին և քաղաքական իմաստով ամենից անվտանգը: Ծրագիրը մշակողները վստահ էին, որ անկախության տեսլականը փայփայող միութենական հանրապետությունների քաղաքական ընտրախավերը կաջակցեն նախագծի իրագործմանը: Մենք այդ գաղափարի կողմնակիցն ենք, և մեր հոդվածներից մեկում փորձել ենք ցույց տալ, որ այդ տարիներին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած ոչ մի նշանակալից իրադարձություն, երկրի ղեկավարի ձեռնարկած ոչ մի քայլ դուրս չի մնում այդ նախագծի իրագործման համատեքստից[8]: Վերլուծությունը ցուց է տալիս, որ միութենական հանրապետությունների որոշ ղեկավարներ տեղյակ էին *Մեծ նախագծի* բովանդակությանը: Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին նախագահը դրանցից մեկն է եղել[9]:

Լեռնային Ղարաբաղը այդ ծրագրով պիտի ծառայեր որպես գերտերության փլուզման պայթուցիկ: Սակայն ի վերջո այն պիտի մնար անկախացած Ադրբեջանի կազմում: Այն, որ ՀՀՇ քաղաքական ղեկա-

---

[8] Տե՛ս **Ալեքսանդր Մանասյան**, Ղարաբաղյան հակամարտությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում, «21-րդ դար», № 4, 2015:

[9] Տե՛ս նույն տեղը:

վարությունը իր գործողությունները համաձայնեցրել է այդ նախագծի նպատակներին, բացատրում է Ղարաբաղյան շարժման ու հետագա տարիների շատ ու շատ իրադարձություններ: Բացատրություն է ստանում ԽՍՀՄ հոգեվարքի ընթացքում Կենտրոնի և Ադրբեջանի համատեղ իրագործած «Օղակ» պատժիչ գործողությունը: Բացատրություն է ստանում նաև այն դիմադրությունը, որ ՀՀՇ-ն ցուցաբերում էր 1989 թ. դեկտեմբերի 1-ի Միացման որոշմանը, բացատրություն է ստանում Շահումյանի հանձնումը, ինչպես նաև 1992 թ. մարտի 5-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին ՀՀ նախագահի տված հարցազրույցը, որում նա ԼՂ ապագան տեսնում է Ադրբեջանական Հանրապետության կազմում՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով: Վերջապես, բացատրություն է ստանում դիմադրությունը, որ ՀՀՇ-ն ցուցաբերում էր 1992-ի հուլիսի 8-ին ՀՀ Գերագույն խորհրդի այն որոշման ընդունման դեմ, որով ՀՀ-ն պարտավորվում է չճանաչել միջազգային որևէ փաստաթուղթ, որում Լեռնային Ղարաբաղը նշված կլինի որպես Ադրբեջանական Հանրապետության մաս:

ԽՍՀՄ տրոհումից հետո Արևմուտքի կողմից Ադրբեջանական Հանրապետության ճանաչումը նախկին Խորհրդային Ադրբեջանի սահմաններում, փաստորեն, Բաքվին տրված քաղաքական արտոնություն էր՝ սկսելու ղարաբաղյան պատերազմը՝ Արցախը Բաքվին ենթարկելու նպատակադրությամբ: Այդ պատերազմի արդյունքները այսօր հայտնի են: Արցախը ոչ միայն դիմակայեց Մոսկվայի անմիջական աջակցությունից զրկված Ադրբեջանի գրոհները, այլև ազատագրեց այն տարածքների մի մասը, որ Կովբյուրոյի չընդունած, բայց գործադրած որոշման համաձայն՝ պիտի մաս կազմեր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի: Արցախի կենտրոնական շրջանների մի մասը և ողջ Հյուսիսային Արցախը օկուպացված են, հայ բնակչությունը՝ բռնությամբ տեղահանված:

Ղարաբաղյան կոնֆլիկտի երրորդ փուլը շարունակվում է մինչ օրս, և եթե հակիրճ ձևակերպելու լինենք նրա գլխավոր իրադարձությունները ու արդյունքները՝ դրանք համեմատության մեջ դնելով 1918-1920 թթ. հետ, ապա պիտի արձանագրենք հետևյալը:

Առաջին: Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լեգիտիմ կայացած, դե ֆակտո անկախ պետություն է և ի տարբերություն 1918-1920 թվականների՝ միջազգային հանրության կողմից չի դիտվում որպես վիճելի տարածք Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանական Հանրապետության միջև: Նա հակամարտության օբյեկտ չէ[10]:

[10] Ժամանակին Հեյդար Ալիևը հաճախ էր հնչեցնում այն միտքը, որ կոնֆլիկտի կարգավորման բանալին իր և Լևոն Հակոբովիչի (ՀՀ առաջին նախագահի) ձեռքերում է, որ ինքը և ՀՀ նախագահը համաձայնության կգան կոնֆլիկտի կարգավորման հարցում: Փորձառու ու խորամանկ Հեյդարը ոչ միայն շոյում էր ՀՀ առաջին նախագահի ինքնասիրությունը, այլև հիմքեր էր ստեղծում Լեռնային Ղարաբաղին կոնֆլիկտի օբյեկտ դարձնելու համար: Խորամանկությունը չաշխատեց, քանի որ

Երկրորդ: Հակամարտության կարգավորումը նորից միջազգայնացված է: Բայց այս անգամ այն իր հովանու տակ է առել ՄԱԿ-ի աջակցությունը վայելող միջազգային հսկա մի կառույց, իսկ կարգավորման անմիջական գործողությունները իրագործում են ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող երկրները՝ Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և Ֆրանսիան: Հարցին պարբերաբար անդրադառնում են միջազգային տարբեր կազմակերպություններ՝ վերապահումով, որ ինենք սատարում են կոնֆլիկտի կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը: Դա ապացույցն է այն նշանակության, որ գլոբալ քաղաքական գործընթացներում աշխարհի հզորների կողմից տրվում է Լեռնային Ղարաբաղին: Շարունակելով զուգահեռները անցյալ դարի 20-ական թվականների հետ՝ նկատենք, որ Ազգերի լիգայում նրա հիմնադիր անդամների ձայները տարբեր կշիռ են ունեցել: Լեռնային Ղարաբաղին վերաբերող քննարկումներում վճռական է եղել Անգլիայի բռնած դիրքը, որը բարյացակամ չէր տրամադրված անհնազանդ արցախահայության նկատմամբ: Այսօր այլ է իրավիճակը: Ո՛չ ԵԱՀԿ-ում, ո՛չ էլ Մինսկի խմբում ղարաբաղյան հարցում արտոնյալ կամ բացառիկ իրավունքներով օժտված երկիր չկա:

Երրորդ: Ի տարբերություն 1918-1920 թվականների, երբ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը նոր-նոր էր գործողության մեջ դրվում և չէր կարող դիտվել որպես արցախյան խնդրի կարգավորման իրավական գործիք, մեր օրերում, ընդհակառակը, կոնֆլիկտի հանգուցալուծման հիմքում ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և տարածքային ամբողջականության սկզբունքների հետ դրված է նաև ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրավական նորմը: Ճիշտ է, դրանք դրված են փաթեթով, և ղարաբաղյան հարցում դրանց՝ որպես հավասարազոր սկզբունքների, միաժամանակյա-համատեղ կիրառությունը հատկապես տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքների այնպիսի սխալ մեկնաբանության պարագայում, թե իբր դրանք հակասում են մեկը մյուսին, հիմնախնդիրը տանում են իրավական փակուղի: Դա կարող է լինել բանակցությունների արդեն տասնամյակներ շարունակվող տեղապտույտն արդարացնող բացատրություն: Բայց միայն դա չէ այդ սկզբունքների հետ կապված խնդիրը: Բանն այն է, որ դրանք ներառված են հակամարտության կարգավորման գործընթաց՝ բուն հիմնախնդրի փաստական հենքից կտրված, սոսկ որպես կարգախոսներ: Խնդիր չի դրվում պարզել, թե, օրինակ, տարածքային ամբողջականության սկզբունքը ինչպես է կիրառվում Ադրբեջանական Հանրապետության նկատմամբ, երբ վերջինս հրաժարվել է լինել

Հայաստանի Հանրապետության նախագահը շրջանառության մեջ դրեց դրան հակադարձող բանաձև այն մասին, որ Երևանը կհամաձայնվի ամեն մի որոշման հետ, որին իր համաձայնությունը կտա Ստեփանակերտը: Իսկ դա արդեն Լեռնային Ղարաբաղը բանակցային գործընթացի հիմնական սուբյեկտ դարձնելու բանաձև էր:

Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը և ցանկանում է վերականգնել 1918-1920 թթ. ճանաչված սահմաններով մուսավաթական Ադրբեջանի պետականությունը: Կամ՝ ինչո՞ւ է նորից դրվում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հարցը, երբ Բաքուն ըստ էության քանիցս ճանաչել է այդ իրավունքը, որը 1990 թ. օրենսդրորեն վերահաստատվել է ԽՍՀՄ կողմից: Դա է հենց կոնֆլիկտի կարգավորման քաղաքականացման այն հնարքը, որ իրագործում են Մինսկի խմբի համանախագահները: Բայց սկզբունքների հետ «խաղը» հակամարտության փաստական հենքից կտրելով չի վերջանում: Դրան հետևում է սկզբունքների այնպիսի մեկնաբանություն, որ դրանք դառնում են անհամատեղելի՝ խնդիրը մղելով դեպի իրավական փակուղի: Համանախագահների կողմից տարբեր մեկնաբանությունների տեղիք չի տալիս միայն միջազգային իրավունքի այն սկզբունքը, որն արգելում է ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը կոնֆլիկտի կարգավորման ընթացքում: Սա այն սկզբունքն է, որը կոչված է սառեցնելու խնդիրը և պահպանելու ստատուս քվոն մինչև կհաղթահարվի մյուս երկուսի հակասությունը: Այդպես է միջազգային իրավունքի քողի տակ շուրջ քառորդ դար թաքցվում խնդրի քաղաքականացման փաստը:

Չորրորդ: Կոնֆլիկտի կարգավորման գործընթացը հայտնվել է քաղաքական սառեցման իրավիճակում, և Մինսկի խմբի համանախագահների մեկ ձգձգվող, մեկ հապաղող, մերթ ավելի հաճախակիացող այցելությունները տարածաշրջան արդեն ի զորու չեն շղարշելու բանակցությունների տեղապտույտի և կոնֆլիկտի սառեցման ու ստատուս քվոյի կայունացման իրողությունը: Համանախագահները արդարացում ունեն: Նրանք որդեգրել են հակամարտության խաղաղ հանգուցալուծման ռազմավարություն, մերժում են կողմերի նկատմամբ ուժի կիրառությունը, ստանձնել են միայն միջնորդական առաքելություն, ժամանակ առ ժամանակ մշակում են առաջարկություններ, որոնք վերջին տարիներին, որպես կանոն, Բաքուն մերժում է՝ բանակցությունների անպտղության մեղքից ազատելով համանախագահներին: Սակայն խնդիրը միայն Բաքվի ոչ կառուցողական դիրքորոշումը կամ արհեստականորեն ստեղծված իրավական փակուղին չէ, որի մեջ հայտնվել է կարգավորումը: Ենթադրելի է, որ բանակցությունների տեղապտույտի իրական բացատրությունը Հարավային Կովկասով շահագրգիռ ուժային կենտրոնների (ԱՄՆ, Եվրոպա, Ռուսաստան) միջև հաստատված ռազմաքաղաքական հավասարակշռությունն է, որի գործնական դրսևորումը ոչ միայն արդեն տասնամյակներ շարունակվող ստատուս քվոն է, այլև Մինսկի խմբի համանախագահների կողմից ժամանակ առ ժամանակ հնչող հայտարարություններն այն մասին, որ ընդունված սկզբունքների շրջանակներում հակամարտության կարգավորման հարցում նրանք տարաձայնություններ չու-

նեն, ինչը անհավանական է[11]:

Հինգերորդ: Ազգերի լիգայում քննարկումների նյութ դարձած Արցախը թե՛ Լիգան, թե՛ Երևանն ու Բաքուն դիտում էին սոսկ որպես երկու նորանկախ պետությունների տարածքային վեճի առարկա: Հետխորհրդային իրողությունների համատեքստում Լեռնային Ղարաբաղը կոնֆլիկտի և նրա կարգավորման գործընթացի ճանաչված կողմ, այդ գործընթացների սուբյեկտ է: 1994 թ. հրադադարի մասին Ստեփանակերտի ու Երևանի հետ ռուսական կողմի միջնորդությամբ Բաքվի կնքած համաձայնագիրը, դրան հաջորդած հրադադարի ռեժիմի կայունացման մասին 1990-ականներին Ստեփանակերտի հետ Բաքվի ստորագրած փաստաթղթերը, բանակցային գործընթացում Արցախի ներգրավվածությունը, ԱՄՆ բազմաթիվ նահանգների, եվրոպական շատ քաղաքների կողմից ԼՂՀ անկախության ճանաչումը, Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի անվտանգության երաշխավոր լինելու մասին ՀՀ իշխանությունների պաշտոնական դիրքորոշումը, ԵԱՀԿ բուդապեշտյան գագաթնաժողովի որոշումն առ այն, որ Մինսկի խորհրդաժողովին որպես շահագրգիռ կողմ պետք է մասնակցեն *«Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչները»* իրավաքաղաքական հաստատումն են այն փաստի, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչված է որպես հակամարտության ու նրա կարգավորման բանակցային գործընթացի կողմ[12]:

---

[11] Մինսկի խմբի համանախագահությունում նախկինում ԱՄՆ-ը ներկայացնող Ջեյմս Ուորլիքի հաճախակի հնչեցրած այն միտքը, թե «ստատուս քվոն դարձել է անտանելի», ամենայն հավանականությամբ արտացոլում էր խնդիրը մեռյալ կետից հանելու ԱՄՆ-ի տեսակետը: Իրականում հաստատված ստատուս քվոյի ցանկացած վերանայում ենթադրում է վերադարձ անցյալի ինչ-որ իրավիճակի: Սակայն Ադրբեջանից բռնահանված հայ փախստականների՝ իրենց բնակատեղիները վերադարձի խնդիրը թույլ չի տալիս տեսնել, թե անցյալի որ իրավիճակին կարելի է վերադառնալ՝ ապահովելու համար նրանց անվտանգությունը: Սա նաև քաղաքակրթական բնույթի հարցադրում է: Լեռնային Ղարաբաղ՝ իրենց նախկին բնակավայրերը, վերադարձող ադրբեջանցիները վստահ կլինեն, որ հայերը ազգային հարաբերություններում երբեք չեն դիմի ֆիզիկական բնաջնջման, ցեղասպանական ակտերի, մինչդեռ Բաքու, Գանձակ կամ հյուսիսային Ադրբեջան՝ նախկին հայկական գյուղերը վերադարձող հայը նման վստահություն երբեք չի կարող ունենալ:

[12] Հայտնի է, որ մի քանի տարի Ստեփանակերտի հետ նույն սեղանի շուրջ բանակցություններ վարելուց հետո Բաքուն փոխել է մտադրությունը և շուրջ քսան տարի հրաժարվում է Արցախի իշխանությունների հետ բանակցային առերեսումից: Սակայն դա որևէ ձևով չի անդրադառնում այն փաստի վրա, որ Ստեփանակերտը բանակցային գործընթացի ճանաչված սուբյեկտ է: Բաքուն չէ, որ պիտի որոշի հակամարտության միջազգային կարգավորման բանակցությունների ձևաչափը: Նա այդպիսի իրավասություններ չունի: 1992-ի բուդապեշտյան գագաթնաժողովից ի վեր՝ ԵԱՀԿ-ն այդ հարցով որևէ նոր որոշում չի ընդունել: Մինսկի խմբի համանախագահների պարբերական այցերը Ստեփանակերտ, ադրբեջանա-ղարաբաղյան զինված ուժերի շփման գծում հրադադարի ռեժիմի կայունացման ԵԱՀԿ ջանքերը և դրանցում ԼՂՀ մասնակցությունը հենց դա են վկայում: Նախագահների կամ արտգործնախարարների մակարդակով Բաքու-Երևան հանդիպումները լոկ նախապատրաստությունն են բանակցությունների այն փուլի, որին պետք է մասնակցի Ստեփանակերտը: Ավելին, այդ հանդիպումները *կոնֆլիկտող կողմերի բանակցություններ* անվանել չի կարելի, քանի որ Հայաստանի

Վեցերորդ: Արցախի Հանրապետությունը մեկն է աշխարհի դեռևս չճանաչված շուրջ 120 այն պետություններից, որոնք XX դարի երկրորդ կեսերին ձևավորված միջազգային քաղաքական համակարգի համար աննախադեպ ու նաև անշրջանցելի երևույթ նշանավորեցին: Ստեղծված իրավիճակը հրատապորեն պահանջում է ժամանակակից միջազգային հարաբերությունների որակապես նոր իրավաքաղաքական գնահատում և ըստ այդմ դրանց վերակառուցում: Կարելի է չկասկածել, որ առաջիկայում առանցքային հարցերից մեկը կդառնա անկախ պետականության կայացման միջազգային իրավական չափանիշների, պետության դե ֆակտո կայացածության ու նրա դե յուրե ճանաչման քաղաքական ակտի վերաիմաստավորման, պետական կազմավորումների փաստական, օբյեկտիվ գոյության և դրանց ճանաչման սուբյեկտիվ գործոնների վերանայման հարցը: Վստահությամբ կարելի է պնդել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը XXI դարի գլոբալ իրավաքաղաքական համակարգի վերակառուցման այդ օրակարգում նշանակալից դերակատարություն կարող է ունենալ որպես իրական «մարտադաշտ» այն կոնֆլիկտի, որը դրսևորվում է պետականության փաստական, դե ֆակտո կայացածության և նրա դե յուրե ճանաչման քաղաքական ակտի, այսինքն՝ օբյեկտիվ իրողության ու դրա ընդունման սուբյեկտիվ շարժառիթների միջև: Դա փիլիսոփայական խորք ունեցող, տեսական լուծում պահանջող հարց է, և նրա հրատապությունը կասկած չի հարուցում, քանի որ խոսքը տեսության ոլորտներից «կարճ միացմամբ» իրական կյանք մտնող գլոբալ բնույթի կոնֆլիկտի մասին է: Արցախը տիպական, դասագրքային օրինակ է այն բանի, թե ինչպես ազգերի ու ժողովուրդների կեցության հիմքերը շոշափող այնպիսի մի հարց, որպիսին իրավունքի ու քաղաքականության դիմաբախությունն է, արդեն 100 տարի դառնում է իրական պատերազմների հարուցիչ, պատճառում ավերածություններ, խեղում մարդկային ճակատագրեր:

Եզրակացություններ

Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ հակամարտության հարյուրամյա փորձը խիստ ուսանելի է թե՛ քաղաքականությամբ զբաղվող փորձագետների, թե՛ միջնորդական առաքելություն իրագործող գործիչների, թե՛ իրավունքի ու քաղաքականության տեսաբանների համար: Այն դասագրքային հարուստ նյութ կարող է տրամադրել էթնոսների քաղաքական վարքի ու հոգեկերտվածքի, իրավունքի ու քաղաքականության փակուղային հարցերի վերհանման ու գիտական իմաստավորման համար: Անկասկած է նաև ղարաբաղյան շարժման ու Արցախյան հերոսամարտի դարակազմիկ նշանակությունը XX դարի սկզբներին ցե-

---

Հանրապետությունը, որն իր անկախությունը հռչակել է Խորհրդային Հայաստանի սահմաններում, ըստ էության կոնֆլիկտի կողմ չէ, և ՀՀ երրորդ նախագահի խոսքերով՝ Երևանը Բաքվի հետ երկխոսության մեջ է մտնում Ստեփանակերտի անունից:

դասպանության ենթարկված ու վերընձյուղված հայ ժողովրդի համար: Արցախյան գոյամարտը այն բանի հաստատումն է, որ ազատատենչ ոգին, ազգային միասնությունը և բռունցքված ուժն են ցեղասպանին իր տեղը դնելու միջոցը:

Բանալի բառեր – *դարաբաղյան կոնֆլիկտ, դարաբաղյան հակամարտության փուլեր, էթնոքաղաքական կոնֆլիկտ, իրավունքի քողի տակ կոնֆլիկտի քաղաքականացում, կովկասյան թաթարներ, ադրբեջանական ազգ ստեղծելու ստալինյան նախագիծ*

АЛЕКСАНДР МАНАСЯН – *Трансформации столетнего противостояния Азербайджан – Арцах с точки зрения событийной основы и политико-правовых результатов.* – В статье рассматриваются трансформации 100-летнего азербайджано-арцахского конфликта в досоветский, советский и постсоветский периоды его истории. Анализ основан на фактах об имевших место событиях и результатах отдельных фаз противостояния. Показано, что благодаря вооружённому сопротивлению и политической борьбе Нагорный Карабах, в 1918-1920 гг. рассматривавшийся Лигой наций как спорная территория, ныне обрёл стстус де-факто состоявшегося государства, признанной стороны конфликта и переговоров о его урегулировании. Проанализированы также взаимотношения политических и правовых факторов в подобных конфликтах, от разрешения которых во многом зависит оздоровление международной обстановки.

Ключевые слова: *Карабахский конфликт, фазы Карабахского конфликта, этнополитический конфликт, политизация конфликта под покровым права, кавказские татары, сталинский проект строительства азербайджанской нации*

ALEKSANDR MANASYAN – ***Azerbaijan-Aatsakh Centennial Conflict Transformations on the Basis of Events and Legal-Political Results.* –** The article considers the legal and political transformation of the Nagorno-Karabakh-Azerbaijan 100-year conflict in the pre-Soviet, Soviet and post-Soviet periods of its history.

The centennial experience of Azerbaijan-Nagorno-Karabakh conflict is strictly inaccurate for both policy-makers and mediators, both for law and policy theorists.

They are viewed from the point of view of the main events and outcomes of the discussed circles. It is shown how Nagorno-Karabakh has reached a state of de facto international status from the disputed territory of 1918-1920 as a party to the conflict and negotiation process, protecting its sovereignty in the battlefield due to armed confrontation and political struggle.

The author touches upon the issues of the conflict of legal and political factors in the international arena, the overcoming of which can play a decisive role in the recovery of the international life.

Key words: *Karabakh Conflict, Stages of Karabakh Conflict, Politicalization of Conflict under the Rule of Law, Ethno-Political Conflict, Caucasian Tatar, Stalin project to build Azerbaijani nationality*